

Հ. ՂԵՒՈՆԻ ԱԼԻՇԱՆԻ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՐԱԵՐԻ ՍԿԶԲՆԱԹԵՐԹԵՐԻ ԶԵՒԱԽՈՐՈՒՄՆԵՐԸ

Հ. Ղ. Ալիշանը, Հայաստանին վերաբերող իր ուսումնասիթ-
րութիւններում, ներդաշնակ կերպով իրար է միահիւսել հայոց
պատմութեանը, մշակոյթին եւ աշխարհագրութեանը վերաբե-
ռուող հարցերը:

Ալիշանը ոչ միայն օգտուել է եւրոպական տարբեր ուղեգ-
րողների աշխատանքներից եւ նրանց գրքերում տպուած՝ Հայաս-
տանը ներկայացնող պատկերներից, այլեւ Հայաստանի իր աջա-
կիցներից ստացուած տարբեր վայրերի տեղագրութեանը վերա-
կիցներից ստացուած տարբեր սեղագրական նամակներից եւ բացիկներից, լուսանը-
բերող նկարագրական նամակներից եւ բացիկներից: Այս ամէ-
կարներից եւ իր համար կատարուած գծանկարներից: Այս ամէ-
կարներից նաև իր համար կատարուած գծանկարներից: Կարո-
նի համագրութեամբ նա գեղագիտական բարձր ճաշակով կարո-
ղացել է ստեղծել եւ իր տեղագրական հատուններում գետեղել
զացել է ստեղծել եւ իր տեղագրական տարբեր սեղագրական ճենով ներ-
Հայաստանի տարբեր նահանգները ընդհանրացուած ճենով ներ-
կայացնող պատկերներ: Կարելի է ասել, որ դրանք այնքան դի-
պուկ եւ բնորոշ են ընտրուած եղել, որ յետագայում կարծես
պուկ եւ բնորոշ են Հայաստանին նուիրուած տարբեր բանաստեղծութիւն-
ընկել են Հայաստանին համար հիմքում:

Հայաստանի աշխարհագրութեանը նուիրուած առաջին
գործը «Տեղագիր Հայոց Մեծաց»ն է, որ տպագրուել է 1855ին:
Անհրաժեշտ է նշել որ, սկսած այս հրատարակութիւնից, Ալիշա-
նի աշխատանքները աւելի շատ պատմական աշխարհագ-
րութեան բնոյթ ունեն եւ ուղեկցւում են տարբեր բնակավայրե-
րութեան բնոյթ ունեն եւ ուղեկցւում են տարբեր բնակավայրե-
րի նկարագրութիւններին կից բերուող պատկերներով: Ինչպէս
վերաբերից երեւում է, այս գործը նուիրուած է Մեծ Հայքի
տեղագրութեանը:

Գրքի մուտքային փորագրանկարով Ալիշանը փորձում է
ներկայացնել պատմական Հայաստանի հաւաքական պատկերը՝ մի-

շարք բնորոշ դրուագներով¹ (Նկ.1): Աշխարհագրորչն Հայաստանը պատկերում է Արարատ լեռան վրայ հանգրուանած Նոյեան Տապանով: Արարչագործութիւնից յետոյ ջրհեղեղով՝ կեանքի երկրորդ նորոգութիւնը կապում է Արարատի հետ: Ինչպէս Ծննդոց գրքում է ասւում. «Եւ նստաւ տապանն ... ի լերինս Արարատոյ» (Ծննդ. Լ 4): Աստուածաշնչային պատմութիւնը Ալիշանի ստեղծագործական մտայլացմամբ տեղայնացուել եւ կապուել է Հայկական լեռնաշխարհի հետ: Պատկերուել է տապանից ելած եւ ետ վերադարձող աղաւնին եւ Արարատի վրայ կապուած ծիածանը, որ խորհրդանշում է Աստծոյ հաշտութեան ուխտը մարդկութեան հետ: Արարատի դիմաց հանգչում են հին Հայաստանի փառքի խորհրդանշանները՝ իշխանութեան գաւազանը, դրօշները եւ արքայական թագը, որ յիշեցնում է Տիգրան Մեծի հատած դրամներին պատկերուած թագը:



Նկար 1. «Տեղագիր Հայոց Մեծաց», 1855, էջ 7

Նկարի կենտրոնում, պատուանդանին կանգնեցուած խաչի վրայ Քրիստոսի անձեռակերտ պատկերն է, որ Արգար թագաւորի միջոցով խորհրդանշում է Հայաստանի առաջին քրիստոնեայ պետութիւն լինելը՝ առաջին քրիստոնեայ թագաւորով: Պատուանդանին յենուած մուսան երգում է հին Հայաստանի փառքը: Յիշենք, որ Ալիշանը բանաստեղծութիւնների մէջ ընդունուած ձեւով մի քանի անգամ դիմում է մուսային եւ հայոց տաւիդին կամ բամբիուին: Ալիշանին համահայկական հռչակ բե-

1 ԱԼԻՇԱՆ, Հ. Ղ., Տեղագիր հայոց մեծաց, Վենետիկ 1855, էջ 7:


բած երրորդ՝ «Հայրունի» հատորը սկսւում է «Ի բամբիոն Հայկազնի» բանաստեղծութեամբ²:

Պատահական չէ, որ Չարենցը «Մահուան տեսիլ» պօէմում այսպէս է նկարագրում Ալիշանին.

Եւ ձեռքին բոնած նա ունի մի հսկայ արծաթեայ տաւիլ:

Բարձրացող խաչքարը բաժանարար գիծ է դարձել Հայաստանի նախաքրիստոնէական եւ քրիստոնէական շրջանների միջեւ: Քրիստոնէայ Հայաստանն են խորհրդանշում վանքը եւ Հայկական գորգի վրայ դրուած ձեռագիր մատեանն ու տպագիր գիրքը: Իսկ վերեւում պատկերուած լուսնի մահիկը, հաւանաբար, ներկայացնում է Օսմաննեան կայսրութիւնը:

Այս գրքում գտնուող երկրորդ նկարը, որին կը ցանկանայինք անդրադառնալ, 70րդ էջում գտնուող՝ «Տեսիլ Մասեաց ի բերդէն Երեւանայ» մակագրութեամբ պատկերն է (Նկ. 2): Այն, ինչպէս նկարի խորագիրն է յուշում, աշխարհագրական տուեալ տարածքը մատնանշող գործառոյթ ունի: Ալիշանը նշում է, որ գրքի տարբեր պատկերներ, այդ թուում եւ այս մէկը, վերցրել է Փրանսիական ծագմամբ ճանապարհորդ, ճարտարապետ եւ հնագէտ Ֆրեդերիկ Դիւբուա դը Մոնպերէի գրքից⁴:



Նկար 2. «Տեղագիր Հայոց Մեծաց», 1855, էջ 70

2 Տե՛ս ԱԼԻՇԱՆ, Հ. Դ., նուագք, հու. Գ., Հայրումի, Վենետիկ 1858, էջ 5:

3 ԵՂԻԾԻ ԶԱՐԵՒՅՑ, Երկերի ժողովածու, հու. 4, Երեւան 1968, էջ 227:

4 Տե՛ս ԱԼԻՇԱՆ, Հ. Դ., Տեղագիր, նշ. աշխ., էջ 5:

Արարատեան դաշտին եւ Երեւանին վերաբերող բաժնում դրուած այս նկարը, վերափորագրուելով եւ մակագրութեան փոփոխութեամբ Հայաստանի ընդհանրացուած պատկերի է վերածում «Յուշիկ» Հայրենեաց հայոց»ի (Վենետիկ, 1869) առաջին հատորում՝ դրուելով տիտղոսաթերթից յետոյ եւ նախաբանից առաջ (Նկ. 3):



Նկար 3. «Յուշիկ» Հայրենեաց հայոց», 1869

Նախաբանն իր հերթին սկսւում է յատուկ շարուածքով եւ գլխատառերով գրուած «Հայրենիք» բառով, որով յիշեալ փորագրանկարը վերածում է Հայրենիքի հաւաքական պատկերի: Նկարի վերին կենտրոնական մասում Արարատն է, ներքեւում՝ Արարատեան դաշտը՝ Արաքս գետով, բարդիների պատկերներով, Արաքսի վրայ գտնուող Տափերական կամուրջով, որով ձգուող ճանապարհին ուղտերի քարաւանն է: Վերջինս իր հերթին խորհըրդանշում է Հայաստանի տարանցիկ ճանապարհներին գտնուելը:

Նկարի ձախ կողմում Երեւացող բերդապարիսպը ներկայացնում է պատմական Արտաշատը, որ նշում է առեւտրական ուղիների քարտէզների վրայ:

Այսպէս, Արարատի եւ Արարատեան դաշտի հետ կապուող եւ տեղագրական գրեթէ ճշգրիտ գծագրում ունեցող նկարը «Յուշիկ»ների սկզբում շարադրանքի միանգամայն այլ համատեքստում ներկայացնում է որպէս Հայրենիքի հաւաքական պատկեր:

Նման ընդհանրացումը պատահական չէր եւ կապւում է Ալիշանի այն ձգտման հետ, որով տեղագրական չորս հատորներից իրաքանչիւրը սկսում է տուեալ նահանգը ներկայացնող հաւաքական պատկերով, որում արտացոլում են նահանգի պատմութեանը եւ մշակոյթին բնորոշ տարրեր եւ աշխարհագրական ու տեղագրական ճշտութեամբ հանդերձ այդ նահանգը բնութագրող տեսարաններ:

Ասուածը այժմ ցոյց տանք տեղագրական հատորներից իրաքանչիւրի սկզբնապատկերով:

Ալիշանի առաջին տեղագրական հատորը «Ծիրակ»ն է, որ լոյս է տեսել 1881ին՝ 1877-1878 ռուս-թուրքական երկրորդ պատերազմից յետոյ, երբ Շիրակի նկարագրուող տարածքը անցել էր ռուսական տիրապետութեան ներքոյ, եւ տեղի հայութիւնը այլեւս ենթակայ չէր Փիզիկական բնաջնջման: «Ծիրակ»ի մի շարք հատուածներից երեւում է, որ Ալիշանը լաւատեսութեամբ էր լցուած երկրամասի ապագայի հանդէպ: Որոշակի ակնկալիք-ներ ունէր, որ անգամ կը վերաշինուէր Անին⁵:

Գիւմրիի մասին գրում է որպէս ներկայում կենդանի քաղքի եւ ոչ թէ անցեալի յիշատակի մասին⁶: Ալիշանի այս ըմբռունումը արտայայտուել է գրքի տիտղոսաթերթին յաջորդող սկզբնապատկերում:


Անհրաժեշտ է նշել, որ Ալիշանը տարբեր բնակավայրերի մասին գրելիս անցեալի աւերակների պատկերմանն էր դիմում այն դէպքերում, երբ ըստ ժողովրդագրական փոխուող վիճակագրութեան գգում էր, որ հայ ազգաբնակչութիւնը աստիճանաբար նուազում եւ փոքրամասնութիւն էր դառնում տուեալ տարածքում:

Բանաստեղծ գիտնականը Շիրակի անցեալն ու ներկան իրար միահիւսուած պատկերելու բաւականին ինքնատիպ ձեւ է ընտրել: Գրքի սկզբում Շիրակի նահանգի քարտէզն է, որի վերեւի ձախ անկիւնում եւրոպական քարտէզագրութեան հետեւողութեամբ ներկայացնում է քարտէզն ընդգրկող տարածքին բնորոշ հաւաքական կերպարը (Նկ. 4): Քանի որ Շիրակը հռչակուած էր հացահատիկի դաշտերով՝ Ալիշանը պատկերում է Շիրակի ողին եւ ժամանակի աշխատաւորուհու գաղափարականա-

5 ԱԼԻՇԱՆ, Հ. Դ., Շիրակ, Վենետիկ 1881, էջ 109:

6 Անդ, էջ 98:

ցուած կերպարը՝ մի ձեռքին խաչանիշ դրօշ, վրան «Շիրակ» գրուած, իսկ միւս ձեռքում եւ ոտքերի մօտ ցորենի խրձուած հասկեր: Պատմաշունչ այս կերպարը կենդանութեամբ է լցուում եւ տեղայնանում գրքի բուն շարադրանքի սկզբնաթերթում:



Նկար 4. «Շիրակ», 1881

Շիրակը թէեւ պատմական յիշատակներով հարստագոյն նահանգներից մէկն էր, ուր գտնւում էր նաեւ Անին, սկզբնանը-կարում, սակայն, գերիշխողը ոչ թէ պատմական տեսարանն է, այլ կենդանի կեանքը (Նկ. 5):

Պատմական յուշարձանները, կիսաւեր կաւոյցները եւ Անիի բերդը, կարծես բնանկարի զարդ դարձած, գտնւում են պատկերի խորքում եւ ներկայացնում են անցեալը: Իսկ առջեւի հարթակում պատկերուած ցորենի հունձքով զբաղուող մարդիկ, եզները եւ ցորենի կապերով ծանրաբեռն սայլը խորհրդանշում են Ալիշանի յոյսերը՝ կապուած Շիրակ աշխարհի հայ ազգաբնակչութեան արդար աշխատանքով ձեռք բերուելիք ունեցուածքի սպահովութեան եւ Փիզիկական բնաջնջման վտանգից զերծ ա-

պատայի հետ: Խաղաղ կեանքով ապրող երիտասարդութիւնն է ներկայացնում ցորենի հասկերի միջից երեւացող մանգաղը ձեռքին երիտասարդը, ով, ժպիտը դէմքին, նայում է խոտերի մէջ հանգստացող աղջիկներին:




Նկար 5. «Շիրակ», 1881, էջ 1

Շիրակի պատկերումը յիշեցնում է Խորենացու՝ այս նահանգի մասին ասուած հետեւեալ տողերը՝ «... ի դաշտ մի մօտաւոր, արգաւանի և բերրի, յորում գնան զուրք ոչ սակաւք»⁷:

Ինչպէս «Շիրակն» է սկսում քարտէսով, որի անկիւնում նահանգի ընդհանրացուած խորհրդանշն է, այնպէս եւ հայկական Կիլիկիային նուիրուած «Սիսուանի» սկզբում գտնուող քարտէզի վերին ձախ անկիւնում կիլիկիայի ընդհանրացուած խորհրդանշական պատկերն է ըստ Ալիշանի:

7 ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւմ Հայոց, աշխտ. Մ. Արևելի և Ս. Թարութիւնամ, Տփդիս 1913, էջ 40:



Նկար 6. «Սիսուան», 1885

Հայկական աղբեւրներում կիլիկեան Հայաստանի հիւսիսարեւելեան շրջանը կոչւում է Լեռնային կիլիկիա (Գահ կիլիկոյ), հարաւարեւելեան ծովամերձ շրջանը՝ Դաշտային կիլիկիա, արեւմտեան շրջանը՝ Քարուտ կիլիկիա: Եւ քանի որ կիլիկիայի հայկական թագաւորութիւնը ընդգրկում էր առաւելապէս Լեռնային կիլիկիան, ուստի այստեղ անգամ պատկերային չափազանցուածութեամբ ներկայացւում են լեռները:

Կիլիկիան հռչակուած էր իր լեռնային ամրոցներով, եւ Ալիշանը այստեղ պատկերել է նման լեռնային ամրոցներ՝ ընդհանուր գծագրամամբ, որոնց պատկերները գտնում ենք տեղագրական նկարագրութեան համապատասխան էջերում:

Նկարում կենարոնական դիրք են գրաւում առիւծը եւ եզր, որի վրայ նստած է մի կին: Եզրի պարանոցը պատուած է ծաղկահիւս շղթայով, իսկ կինը թագ է կրում: Ալիշանը այստեղ անդրադարձել է հին յունական դիցաբանական պատումներից մէկին՝ Եւրոպայի առեւանգմանը: Ինչպէս յայտնի է, Եւրոպան

Փիւնիկիայի արքայի դուստրն էր: Զեւսը սիրահարւում է նրան եւ գեղեցիկ, ճերմակ ցուլի կերպարանափոխուելով՝ յայտնուում է դաշտում, որտեղ Եւրոպան եւ իր նաժիշտները ծաղիկներ էին հաւաքռում: Եւրոպան հիանալով ցուլի գեղեցիկութեամբ, նստում է նրա վրայ եւ զարդարում իր հաւաքած ծաղիկներով եւ ծաղկապսակով: Այդ պահին Զեւսը նետում է ծովը եւ լողալով Եւրոպային հասցնում է մինչեւ Կրետէ կղզի⁸: Այս պատմութեանը անդրադառնալով Ալիշանը դրում է, որ Զեւսը առեւանգուած Եւրոպային բերում է գրեթէ Կիլիկիայի տարածք⁹: Այդպէս նրան համարում է Կիլիկիայի նախահայկական շրջանի խորհրդանիշներից:

Տարբեր դարաշրջանների գեղանկարիչների սիրելի թեմաներից է եղել Եւրոպայի առեւանգուածը: Նա հիմնականում պատկերուել է ծովի ջրերում, կատարուածի անսպասելիութիւնից ապշած եւ Զեւսի ոսկէ եղջեւրներից բռնուած: Զնայած որ Ալիշանի փորագրանկարում նրանք պատկերուած են ոչ թէ Միջերկրական ծովում լողալիս, այլ Լեռնային Կիլիկիայի համայնապատկերում, այնուամենայնիւ տեսնում ենք, որ Եւրոպան դարձեալ բռնել է ցուլի եղջեւրից: Եւրոպայի թագը յուշում է նրա արքայական ծագման մասին:

Նոյն այս նկարը առանց կնոջ, գտնում ենք բուն շարադրանքի սկզբնաէջում, որում Ալիշանը ներկայացրել է Կիլիկիայի հաւաքական եւ ընդհանրացուած պատկերը (Նկ. 7): Նկարի վերին աջ անկիւնում Լեռնային Կիլիկիան է իր բերդամրոցներով, իսկ լեռների փէշերին քաղաքներն են, որոնցից գէպի ձախ տարածում է Դաշտային Կիլիկիան: Երկրի ափերը ողողում են Միջերկրականի ջրերը:

Նկարի խորքում տեսնում ենք մայր մտնող արեւը, որ հաւանաբար խորհրդանշում է Կիլիկիայի հայկական թագաւորութեան մայրամուտը:

Երկրորդ անգամ առիւծի եւ ցուլի պատկերին հանդիպում ենք այս նկարի ստորին ձախ անկիւնում, թէեւ գրանք տարածաշրջանին բնորոշ կենդանիներ չեն: Սակայն ինչո՞վ է պայմանաւորուած գրանց հանգէս գալը այս նկարներում: Այդ հարցի պատասխանը գտնում ենք գրքի առաջաբանում եւ յաջորդող էջերում: Ալիշանը գրելով Կիլիկիա բառի ստուգաբանութեան մա-

8 ԿՍН, Հ., Լեգենդы и мифы древней Греции, Москва 1954, 120-122.

9 ԱԼԻՇԱՆ, Հ. Պ., Սիսուամ, Վենետիկ 1885, Էջ 38:

սին ասում է, որ այն բխեցւում է նաեւ յունարէն Խիլիկ բառից, որ նշանակում է գոմէշ: Հետեւաբար Կիլիկիա բառը ստուգաբանուել է նաեւ որպէս գոմէշի Երկիր¹⁰: Ալիշանը միաժամանակ գրում է, որ Տարսոնում հատուած դրամների վրայ ցուլ է պատկերուած եղել¹¹:



Նկար 7. «Սիսուան», 1885, էջ 1

Կիլիկիայի Հայկական թագաւորութեան ամենանշանաւոր թագաւորներից էր Լեւոնը, ով Լեւոն Երկրորդ է անուանւում, թէեւ իրականում որպէս թագաւոր առաջինն է: Նա Լեւոն Երկրորդ է համարում, որովհետեւ Կիլիկիայի Հայկական իշխանապետութեան իշխան Լեւոնը այնպէս էր հռչակուած, որ նրան Լեւոն Առաջին են անուանել: Ինչպէս գիտենք՝ Լեւոն նշանակում է առիւծ: Կիլիկիան պատմիչները գրում են. «Լեւոն, որ եւ առիւծ ասի»:

10 Անդ:

11 Անդ, էջ 39:

Ալիշանը, վկայակոչելով յոյն պատմիչներին, ասում է, որ նրանք Լեռն Երկրորդի Լեռնային Կիլիկիայից դաշտային Կիլիկիա իջնելու եւ նուաճելու մասին գրում են. «Իրեւ առիւծ ամենի ելեալ ի մօրեաց՝ յարձակէր յլնդարձակ դաշտագետինն Կիլիկիոյ»^{12:} **Ալիշանի Ղեւոնդ անունը նոյն Լեռնն է Լ-Ղ լծորդմամբ,** ուստի Ալիշանը եւս ոգեւորութեամբ է գրում Լեռն անուան առիւծ նշանակելու մասին:

Այսպիսով, ցուլը խորհրդանշում է Կիլիկիայի նախահայկական շրջանը, իսկ առիւծը՝ հայկականը: Ալիշանը այս ըմբռնումը խտացուած ձեւով արտայայտել է՝ բերելով հետեւեալ քանդակի նկարը, ուր առիւծը իր մագիլների մէջ է առել եզան գլուխը (Նկ. 8): Նկարի մակագրութիւնում ասում է. «Կիլիկիա նուանեալ»^{13:} Ալիշանը այս նկարը զբել է գրքի այն տեղում, ուր աւարտում է Կիլիկիայի նախահայկական շրջանի մասին գրելը եւ սկսում է գրել Ռուբինեանների Կիլիկիայում հաստատուելու մասին:

բոդ ազգաց և պետութեանց հզորաց, Յունաց, Թաւրիաց
և Փամիկաց, յաջողէր յաստի քամ գիւր ժի՞ զարո՞ւ բու-
րբամե ափանատ Կիլիկիոյ, և կոչել յիւր տոհմացինն.
անոն զամ՞ հզոր իշխացագան և դաստակերաի նոցին,
որպէս առաջիկոց ցացցէ Դրսաւ:



12. Կիլիկիա նուանեալ. (Տիե բանակ բրծուի).

ԳՐՈՒԹ.Գ (Բ)

ՆՈՒԱՃՈՒՄՆ ԿԱԼՅԿԻՈՑ Ի ՀԱՅՈՑ ՈՒԽԵՒՆԵԱՆՑ

13. Յետ ոհեկըց և ննց Հայկազնան Երկուս մեծաւ.

Նկար. 8. «Սիսուան», 1885, էջ 42

Տեղագրական հատորներից երրորդը «Այրարատ»ն է, որ հրատարակուել է 1890ին: Այստեղ առաջաբանից յետոյ, յաջորդ

12 Անդ, էջ 50:

13 Անդ, էջ 42:

էջում պատկերուած է Նոյի իջնելը Արարատ լեռից¹⁴ (Նկ. 9): Ողջ նկարով մէկ տարածուած են Արարատի վերասլաց ժայռերը եւ գագաթին հանգրուանած Նոյեան տապանը: Տապանից դուրս եկող կենդանիները բաժանուած են երկու խմբի: Եսայու մար- եկող կենդանիները «Եւ նարակեսցէ գայլ ընդ գաղին... եւ առիւծ իբրև գարէութեան ամագլութեամբ» (Ես ԺԱ. 6-9) խօսքերի համաձայն՝ գիշատիչ ընտանի ցամաքային կենդանիները, սողունները՝ առիւծի ա- ռաջնորդութեամբ, միասնական եւ համերաշխ կերպով իջնում են լեռն ի վար, իսկ ազատութիւն ստացած թռչունները ճախրում են դէպի վեր:



Նկար 9. «Այրարատ», 1890

կենդանիների կողքին, ժայռերից մէկի վրայ պատկերուած են 7 հոգի: Նրանք Նոյի ընտանիքի անդամներն են՝ Նոյի կինը, նրա երեք որդիներն իրենց կանանց հետ: Երեւում են ջրհեղեղի դեռ չնահանջած ջրերը եւ դրանց մէջ գտնուող մարդկային դիմակները: Քարերին ընկած մարմին- մէջ գտնուող մարդկային դիմակները: Քարերին ընկած մարմին-

¹⁴ ԱԼԻՇԱՆ, Հ. Պ., Այրարատ, Վեմետիկ 1890, Էջ 1:

յիշեցնում է նույիրատուական բարձրաքանդակները, ուր պատկերում էին եկեղեցին եւ եկեղեցու բարերարը: Նրան լսողների շարքում են մի քանի հասարակ գիւղացիներ եւ մի հոգեւորական: Հաւաքուածների մէջ պատկերուած է քնար նուազող մուսան:



Նկար 10. «Սիսական», 1893

Ինչպէս «Տեղագիր Հայոց Մեծաց»ում, այստեղ նոյնպէս գետնին են խոնարհուած սուրը եւ վահանը, եպիսկոպոսական գաւազանը, խոյրը եւ բուրվառը: Գետնին դրուած բոլոր այդ իրերի մէջ երեւում է արծաթէ կազմով մի փակ ձեռագիր, որի միջից սակայն, արմատներ են դուրս գալիս եւ տարածուած հողի մէջ: Ալիշանը այդպէս ցանկացել է ցոյց տալ հայոց հողի դարաւոր կապուածութիւնը հայկական մշակոյթի եւ կրօնի հետ:

Զին վանքը եւ անտառախիտ քնութիւնը, անցեալի դէմքէրը եւ ժամանակի գեղջուկ բնակիչները կերպարներին բնորոշ հանդերձներով խորհրդանշում են երկրամասի պատմական անցեալը եւ կենդանիորէն շարունակուող ներկան:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Ալիշանի տեղագրական հատորների սկզբնաթերթերի փորագրանկարները թէեւ գեղարուեստական բարձր ձեւաւորում են հաղորդում գրքի էջերին, սակայն միայն գեղագիտական նպատակով եւ գրքարուեստի թերագրանքով չէ որ կատարուել են, այլ խտացուած ամփոփումն են Ալիշանի ասելիքի եւ պատմահայեցողութեան, ուր բնապատկերներն իսկ պատմականանում են եւ անցեալի գծեր ձեռք բերում:

Պատահական չէ, որ ոչ միայն այս սկզբնաթերթերում, այլև յաջորդող շարագրանքում լուսանկարներից աւելի գերակշռում են բանաստեղծ-գիտնականի մտալնկարման քուրայով անցած փորագրապատկերները, որոնց բուն իմաստին եւ էութեանը հասու լինելու համար պէտք է թափանցել ալիշանեան էջերի եւ տողերի խորքը:

ՇՈՂԱԿԱԹ ԴԵՒՐԻԿԵԱՆ

Summary

THE DECORATION OF THE FRONTISPICES OF GHEVOND ALISHAN'S TOPOGRAPHIC VOLUMES

SHOGHAKAT DEVRIKYAN

The frontispieces of Gevond Alishan's volumes dedicated to different states of Armenia, begin with presenting the engravings of this state collectively and according to his formed idea. Each of them outlines the collective history and culture of the area for the reader.

Alishan's first topographic volume is "*Shirak*", which was published in 1881. The engraving of the frontispiece depicts wheat ears and in the background there are historical monuments, which is connected to the historical past of Shirak by a wheel and the wheat fields mentioned by Khorenatsi and the contemporary life of the state under the Russian govern by the guarantees of the life assurance.

In the "*Sisvan*" (1885) dedicated to the Armenian Cilicia, concerning with the policy of Turkish authorities directed to the physical extermination of the Armenians, the recital is more gloomy and has a historically emphasized direction. It is also expressed in the pictures of the first two pages of the book, which mainly represent the past. In both pictures the images of a bull and a lion attract attention. The Bull is the ancient Greek name associated with Cilicia, and the lion, in Latin called ghevond, symbolizes the Armenian state of Cilicia.

"*Ayrarat*" (1890) begins with the image of the flood, symbolizing the idea of repairing life, starting from Armenia, at the foot of Ararat.

As Syunik, like the provinces of Shirak and Ayrarat was also under Russian rule without the threat of annihilation, so the frontispiece of "*Sisakan*" depicts the rich historical past of Syunik with mountainous landscape and life going on next to the patriarchs of Syunik and inhabitants in rural costumes.

The frontispieces of Alishan's topographic volumes give a high artistic decoration to the pages of the book, they however are not only made for aesthetic purposes, but to demonstrate Alishan's point of view, mentality and understanding of the history, where the landscape becomes historical and acquires some traces of the past.